

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկինն իտա Բֆայֆֆեր : (Տես երես 46)

Բֆայֆֆեր տիկնոջ յանդուգն գործքերուն նայելով՝ կրնայ մարդ կարծել որ այս ձեռներէց կնիկը հսկայաձև եղած ըլլայ . բայց այնպէս չէր , միջակ հասակի ալ չէր հասներ , և արտաքուստ այրական տեսք մը չունէր : “Նիծաղս կու գայ , կ'ըսէր իր նամակներուն մէկուն մէջը , անոնց վրայ՝ որոնք ուրիշ կերպով չճանչնալով զիս՝ բայց եթէ ըրած ճամբորդութիւններովս , կ'երևակայեն թէ ես աւելի մարդու կը նմանիմ քան թէ կնկան : Ինչպէս կը սխալին այսպիսիք : . . . Ուրիշները հասակաւ վեց ոտք բարձր կը համարին զիս , յանդուգն կերպարանքով , ատրճառակը մէջքս . իսկ ես ընդ հակառակն այնչափ հանդարտ և քաշուող կնիկ մըն եմ , իբրեւ թէ անոնցմէ մէկն ըլլայի՝ որոնք ամենեւին ոտուրնին գեղերնէն դուրս հանած չեն , , : Եւ ով որ զինքը տեսած է՝ իր ըսածին ճշմարտութեանը կը վկայէ :

1851ին դարձեալ ճամբորդութեանց եռանդեամբ բորբոքեալ որ միշտ զինքը կը մաշէր , նորէն Եւրոպայէն դուրս ելաւ , և առջի մեծ ճամբորդութեան դիպուածներէն աւելի մեծ վտանգներու պիտի հանդիպէր : Սիտք ունէր հարաւային Իֆրիկէի ներսերը մտնել և մինչև Եկամի լիճը հասնիլ . բայց իր ստակը չբաւեց աս ճամբորդութեանս ձեռք զարնելու և արշաւանքը ուրիշ կողմ դարձուց : Եւրէն Հնդկային ուլկիանոսն անցաւ և գնաց Սալեզիա , որ իր քննութեանց գլխաւոր կեդրոնն եղաւ : Եւրոպայի Պոռնէոյ կղզին պտըտեցաւ , որուն եզերքներուն մէկ մասը Հոլանտացուոց ձեռքն է , բայց իր վախճանը միայն եզերքները պտըտիլ չէր . անօգուտ տեղը դիմացը գրին այն վտանգները որոնց մէջը պիտի իյնար , թէ որ ուզենար կղզւոյն խորերը մտնել . սիրտ ըրաւ ինքը ու Պոռնէոյի ներսերը գնաց :

Ինչպիսի զարմանալի արիութիւն մը պէտք էր ունենար այնպիսի ճամբորդութեան մը տառապանքը և նեղութիւնները քաշելու համար . որովհետեւ գիշերները բացօթեայ կ'անցընէր անտառներու մէջ , կերակրոյ կողմանէ՝ գոհ կ'ըլլար քիչ մը բրնձով , բոլոր օրը թուփերու մէջ կը քալէր որ ոտուրները կը վերաւորէին , վազուկ ջուրներուն մէջէն լողալով կ'անցնէր , ամենեւին արգելքէ մը չէր վախնար , և իր յանդգնութեամբ ամենէն քաջասիրտ վայրենիներն ալ կը զարմացընէր : Տեսակ մը հագուստ ալ հնարեր էր իրեն համար , որ քաղաքականացեալ մարդկանց մէջ հագնելու բան չէր . աղամաթ գենուոյ լայն տերեւ մը գլխարկ շինէր էր իրեն , որ այրեցած գօտոյն աւելուն սաստիկ ճառագայթներէն կը պաշտպանէր զինքը . զգեստները աւելի էրիկ մարդու էին քան թէ կնկան . բաւական էր իրեն որ դիւրատար ըլլային , տէրութեան չէր նայէր :

Պոռնէոյի խորերուն բնիկները Տայաք կ'ըսուին , և բնութեամբ վայրենի են . կ'ըսեն թէ երբոր տայաք մը խոստացած ըլլայ կնկան մը որ մէկու մը գլուխը բերէ իրեն՝ պէտք է որ խոստմունքը ի գործ դնէ ինչ որ ալ ըլլայ : Եւրէն համար բարեկամ կամ թշնամի հաւասար է . ցանկացածը փափաքածը մարդու գլուխ մըն է , և ասոր համար շատ անգամ ժայռի կամ ծառի մը ետեւ կը սպասէ իր ուզածը ձեռք ձգելու համար , և աչքը վազրի աչքի պէս ուղիղ կը կռնէ և նետը ոչ երբէք կը վրիպի իր նպատակէն : Եւս մարդիկներուն համար , որ մարդակեր են , առաջին անգամն էր որ եւրոպացի կին մը կը տեսնային իրենց մէջ . անոր համար ալ իրենց առջի զգացմունքը զարմանքն եղաւ ու Բֆայֆֆերի չղզան . կանայք իրենց ամենէն աղուոր զգեստներովը դիմացն ելան , մանեակներով և ապարանջաններով զարդարուած , և մէջերնէն մէկը վիզը մետաղէ զարդ մը անցուցած էր , որ տասը հազարապարկ կը կռնէր : Բֆայֆֆեր բանակէ բանակ կ'անց-

ներ, և իր համարձակ վարմունքովն ա-
մէն տեղ մեծ յարգութիւն կ'ընդու-
ներ: Վեղի մը պէս տեղ մը մարդու
գանկերով յաղթանակի հանդէս մը
ըրին իրեն առջև. «Տայաք մը, կ'ըսէ
Բֆայֆֆէր, երկու գլուխ ձեռքը ա-
ռաւ, և ուրիշները սկսան թքնել այս
անկենդան երեսներուն վրայ. աղաքնե-
րը սաստիկ հարուածներ կու տային ա-
նոնց և իբր անարգութեան նշան գե-
տինը կը թքնէին: Տայաքներուն պաղ
և հանդարտ դէմքերը նոյն ժամանակը
անանկ վայրագ էին, որ սարսափը պա-
շարեց զիս»: Տայաքները մէջերնին
անդադար մէկզմէկ ջարդելու պատե-
րազմներ կ'ընեն, և սովորաբար թու-
նաւոր նետերով զննուած են: Սովու-
րութիւն ունին իրենց մէջքէն մարդ-
կանց մազերով հիւսած կողով մը կա-
խելու և մէջը կը դնեն իրենց լծնա-
մեաց գլուխները, ինչպէս օրսորդները
իրենց որսը կը դնեն մախաղին մէջ:
Բֆայֆֆէր այս վայրենիներուն մէջ
ապրեցաւ, և անոնց վրաններուն մէջ
քնացաւ այնպիսի գանկերու քով, որ
դեռ գարշահոտութիւն կը ձգէին:

Բֆայֆֆէր Լադաքի սուլդանին
գնաց, որ աշխարհիս ամենէն հարուստ
թագաւորներէն և իրենց հարստու-
թիւնը քիչ վայրոյններէն մէկն է: Լա-
դաքի սուլդանին քովն է ամենէն մեծ
անհարթ ադամանդը, որ 367 քրադ կը
կշռէ, բայց թէ որ ողորկուած ըլլար՝
183 կը կշռէր: Վաթաղդաբար ոչ ոք
կրնայ զան տեսնալ, որովհետեւ սուլ-
դանը ծածուկ կը պահէ: Բֆայֆֆէր
ուզեց ադամանդի հանքերը պտրտիլ և
սուլդանէն հրաման ուզեց, որ մարդա-
սիրութեամբ մը տուաւ իրեն՝ ըսելով
թէ բրիչ մը առնէ հետը և որչափ որ
ադամանդ գտնայ բոլորն ալ իրեն ըլլայ:
Իրեն տեղը ուրիշ ճամբորդ մը ըլլար,
այս առիթը սիրով կ'ընդունէր. բայց
ինքը պատասխանեց թէ ադամանդ
տեսնալու եկած էր և ոչ թէ փնտռելու:

Ընէպէս կղզին մէջ արտաքոյ կար-
գի հանդիսի մը ներկայ գտնուեցաւ,
այսինքն ակումները խարտոցելու. ա-

սիկայ գրեթէ կրօնական գործողու-
թիւն մըն է խել մը մալաքի ժողովը-
րոց մէջ: Բմէն թագուհի բռնադա-
տուած է իր հպատակացի օրինակ տա-
լու. ուստի Պարուի թագուհին ալ մեծ
հանդիսով իր ակումները խարտոցել
տալու կ'երթար՝ երբ Բֆայֆֆէր իր
թագաւորութեան մէջ մտաւ: Օջուե-
լի գործողութեամբ մը սկսաւ հանդե-
սը. պառաւ մը նախ թքով թագու-
հոյն քունքը օծեց. վերջը գործաւոր
մը հասարակ խարտոցով մը ակումները
մաշեցուց. կը տեսնուէր թէ թագու-
հին սաստիկ կը տանջուէր: Յետոյ ա-
քաղաղի արեան քանի մը կաթիլ կաթե-
ցուցին լնտերացը վրայ: Ըստ մը պա-
լատական տիկնայք ալ նոյն խարտոցին
տանջանքին համբերեցին: Երբոր ա-
մէն բան լմնցաւ, երգեցողաց դասեր
սկսան երգել, և ուտելիքներ սկսան
պտրտուիլ: Ընէպէս կղզին տեսնա-
լէն վերջը, Բֆայֆֆէր Սումադրա
կղզին անցաւ, ուր որ աւելի վայրենի
և աւելի արիւնոտ ին մարդիկնե-
րը քան զՏայաքները: Բյս կատաղի
բնիկները Պաթայք են, որ ուրախու-
թեամբ կը խմեն մարդկային արիւնը.
և քանի մը ցեղեր կը յիշուին իրենց
մէջ, որոնք գերիներ կը գնեն ուտելու
համար: Պատերազմի մէջ բռնուած
գերիները և այն օտարականները ու-
րոնք լրտեսի տեղ կը դրուին նէ՝ իրենց
որովայնին զոհ կ'ըլլան: Պաթայք կ'ը-
սեն թէ մարդկային միսը շատ աւելի
սննդարար է քան թէ կենդանեաց մի-
սը: Եւ մը ճանապարհորդներ կը պատ-
մեն թէ Պաթայք իրենց ծերերուն շա-
տը կ'ուտեն, որոնք չկարենալով հայրե-
նեաց ծառայութիւն մը ընել՝ անարժան
կը սեպուին կենաց. և թէ որդիք ի-
րենց հարց դահիճները կ'ըլլան, հան-
դարտաբար ծառի մը կապելով զանոնք,
և առանց խեղճերուն յուսահատական
աղաղակներէն սրտերնին շարժելու:
Բյլ մեզի անհաւատալի կ'երևայ այս
սաստիճանի վայրենութիւն մը, որով-
հետեւ գժուարին է կարծելը թէ եր-
կրիս վրայ այնպիսի մարդիկ գտնուին,

որոնք բնական օրինաց ամենէն աւելի սրբազան սկզբանցն ալ համարձակ դէմ գործեն :

Բֆայֆֆէր ուզեց ներկայ ըլլալ կեղծեալ գլխատման մը և մարդակերներուն կերակուրին : Այրենիները ցից մը գետինը տնկեցին՝ ծայրը գլխարկ մը դրած 'ի նշան սպաննուելիքին . յետոյ պատերազմական պար մը սկսան , սպառնացան փայտէ մարդուն իրենց դանակներովը , և ձեացուցին թէ արիւնը կը ժողվեն խմելու համար . և այս տեսարանաց շարժմունքներն ու աղաղակները տեսնալու ու լսելու բան էր : Բանի մը օր վերջը Բֆայֆֆէր իր արշաւանքները շարունակած միջոյր յանկարծակի ինքզինքը վայրենիներու խմբի մը մէջ գտաւ , որոնք անտարակոյս զինքը իբրեւ թշնամի պիտի բռնէին սպաննէին , թէ որ իր ճարտարութեամբը վտանգէն չը խալըսէր : Իրեն հետ ընկերող բնիկները յուսահատած խոհեմութիւն սեպեցին ձգելու փախչելու . Բֆայֆֆէր մինակ մնաց այն մարդակերներուն մէջ : « Ի՞նչ մարդիկները , կ'ըսէ Բֆայֆֆէր , վեց ոտնաչափ բարձրութիւն ունէին , դէմքերնէն կրակ կը ցատքէր , որն որ իրենց տգեղութիւնը աւելի դուրս կը ցատքեցնէր . բերաննին մեծ էր ու կը նմանէր վայրի կենդանւոյ մը որկորին . ականջս կը խցընէին իրենց աղաղակներովը : Ասկայն չյուսահատեցայ , և վստահութիւն մը կեղծելով՝ գացի քարի մը վրայ նստեցայ : Այրենիներուն շարժմունքները յայտնի կը ցուցնէին իրենց դիտաւորութիւնը . դանակներով իմ վիզս կը ցուցնէին , և ակռաներով՝ թեւերս . ծամելիքնին կը շարժէին իբրեւ թէ միտս բերաննին ունենային : Իմենէն մօտ կեցողին մերձեցայ և ընտանեբար ուսը զարնելով խնտումերեսով մը ըսի իրեն կէս մը մալացի կէս մը պաթայ լեզուով . « Ի՞նչ պիտի ընէք ինձի պէս պառաւ կին մը , որուն մորթը պնդացած և կարծր է » : Բայն կեղծեալ անխուով կերպը վայրենիներուն հաճելի անցաւ , և շատ պատիւ ըրին իրեն :

Սողոգգեան կղզիներէն Բֆայֆֆէր ձրի ճամբորդութիւն մը ըրաւ դէպ 'ի Վալիֆուռնիա : Բայն ոսկւոյ զգուելի երկիրը , ինչպէս որ կը կոչէ ինքը , իրեն աւելի ահաւոր երեցաւ քան թէ այն երկիրները՝ ուր մարդակերները կը բնակին . մէկէն թողուց և գնաց Բերու : Զիմպորասոյի և Վոգորախիի վրայ ելաւ . և հուսկ ուրեմն Եւրոպա դարձաւ յետ եռամեայ ըրած ճամբորդութեան շրջանին :

1856ին սեպտեմբեր ամսոյն մէջ Բֆայֆֆէր նոր ճամբորդութիւն մըն ալ սկսաւ , որ աղէտալի պիտի ըլլար իրեն : Ստակասգար կղզին պտրտեցաւ , հովահաց թագուհիէն մեծ պատուով ընդունուեցաւ և բնիկներուն ականջները դիւթեց դաշնակ զարնելով : Բայց Ստակասգարի մէջ ճահիճներ կան , ուսկից ասպականիչ գարշահոտութիւններ կը բուրեն , որոնք մահաբեր ջերմեր կը պատճառեն . ամենէն ամուր և առողջ կազմուածք ունեցողներն ալ չեն կրնար դիմանալ այս վնասակար տեղերուն մահաբեր օդոյն : Բֆայֆֆէր ալ այս դժբաղդութեանս հանդիպեցաւ , և այնպիսի հիւանդութեան մը սերմը առաւ հոն , որով քանի մը ամիս ետքը իր ընտանիքն ու աշխարհս պիտի զրկուէր իրմէ : Օրաւոր բնութեան տէր ըլլալով՝ կրցաւ սկզբան դէմ կենալ հիւանդութեանն որ զինքը կը մաշէր , և բաւական ուժ ունեցաւ իեննա դարձեալ տեսնալու , և հոն իր հայրենեաց մէջ վախճանեցաւ անցեալ տարուան վերջերը :

ՊՕՂՈՍ ՔԻՒԼՂԱՆՃԵԱՆ

Ա. Մոռատ . վարժ .

